Արձանագրություն N 2

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի քայքայված ջրագծի փոխարինման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան «22» «հուլիսի» 2019թ.

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Սամվել Առաքելյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Հարություն Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Արթուր Զարգարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արթուր Սողոմոնյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Անի Բազեյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Արեգ Եղիյան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի անդամ՝ Էդուարդ Ջանջուղազյանի ս.թ. հուլիսի 15-ից օգոստոսի 2-ը ներառյալ հերթական արձակուրդում գտնվելու ընթացքում մրցութային հանձնաժողովի անդամի պարտականությունները դրվել են ՀՏՁՀ-ի ծրագրերի իրականացման բաժնի փորձաքննության և վերլուծության խմբի փորձաքննող ինժեներ Հարություն Հարությունյանի վրա:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **բոլոր** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ **2019 թվականի հուլիսի 22-ը:**

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Սամվել Առաքելյանը, իսկ քարտուղարն էր՝ Արեգ Եղիյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին

2. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին
3. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին
4. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին

Հանձնաժողովի նախագահ Սամվել Առաքելյանը ներկայացրեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ համաձայն աղյուսակի:

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	*«ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի քայքայված ջրագծի փոխարինման» աշխատանքներ*	*9,572,720*

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգի հայտերը www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2019 թվականի հուլիսի 22-ին, ժամը 10:00-ին:
2. Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:
3. Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել :
4. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	էլ.փոստ
1	«Աբակ» ՍՊԸ	abak500@yandex.ru
2	«Այպոշին» ՍՊԸ	ajposhin@mail.ru
3	«Ոսկանյանշին» ՍՊԸ	voskanyanshin@mail.ru

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է/են/ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով բոլոր ներկայացրած հայտերը հրավերի պահանջներին համապատասխան է:

Որոշվեց՝

1. Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտը/երը/ ընթացակարգի 1-ին չափաբաժնով բոլոր ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

հ/հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժին 1՝ «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի քայքայված ջրագծի փոխարինման» աշխատանքներ		
		Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«Ոսկանյանշին» ՍՊԸ	6,190,000	-	6,190,000
2	«Աբակ» ՍՊԸ	6,977,000	1,395,400	8,372,400
3	«Այպոշին» ՍՊԸ	7,490,000	1,498,000	8,988,000

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին

Որոշվեց՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հաստատել ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ցանկը՝ համաձայն աղյուսակի՝

Չափաբաժին 2

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը
1	«Ոսկանյանշին» ՍՊԸ
2	«Աբակ» ՍՊԸ
3	«Այպոշին» ՍՊԸ

2. «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 » ծածկագրով ընթացակարգի չափաբաժին 1-ի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Ոսկանյանշին» ՍՊԸ-ին:

3. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության պետական

եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ «Ոսկանյանշին» ՍՊԸ-ին ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ a.yeghiyan@atdf.am՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի՝

Որոշվեց՝

1. «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/81 » ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստը անցակցնել ընտրված մասնակցի որակավորման փաստաթղթերը քարտուղարի կողմից գնահատող հանձնաժողովին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 10:00-ին, ՀՏՁՀ գրասենյակի շենքում. հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Սամվել Առաքելյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Հարություն Հարությունյան _____

Արթուր Զարգարյան _____

Արթուր Սողոմոնյան _____

Անի Բազեյան _____

Արեգ Եղիյան _____